

թիւնը այս գրքի մասին և յորդորն ուրիշներին անպատ-
ճառ կարգալ այն: Վնաս չէ, եթէ համբալների համար
տեղ տեղ դժուար կլինի հասկանալ, գոնէ երևոյթները
կապակցութիւնն իրենց հետեանքներով և զարգացմամբ,
մանաւանդ պատմական իրողութիւնների նկարագրութիւն-
ները օգտակար կլինեն հարկաւոր ծանօթութիւններն
ստանալու:

Երուանդ վարդապետը իւր գիրքը կազմել է գեր-
մանական նման աշխատութիւնների հետեողութեամբ,
պատճառաբանական և գենետիքական ուղղութեան պա-
հանջների համաձայն՝ պատմական երևոյթները շաղկա-
պուած են միմեանց աստիճանական զարգացմամբ: Պատ-
մական երևոյթների վերայ նայում է գիտնականին վա-
յել քննադատութեամբ և աչքով, առանց քաշուելու հա-
կառակութեան մէջ ընկնել եկեղեցու մէջ տիրապետող
հայեացքների հետ: Ուրախութեամբ կարող ենք յայտ-
նել, որ Մայր Աթոռի միաբանի այս գիրքը պատիւ կա-
րող է բերել իւրաքանչիւր եւրոպացի մի գիտնականի,
Կենդանի և աշխոյժ նկարագրութեան համար գիրքը կար-
գացւում է հաճութեամբ: Մենք որ մի քանի տարի դա-
սախօսել ենք ճեմարանում, կիսով չափ տպագրութեան
համար պատրաստել նոյն դարը, և ուրեմն առանձին նո-
րութիւն չէր մեզ համար, առանց ձանձրոյթի սիրով կար-
գացինք մինչև վերջ: Յանկանք, որ Միջին և Նոր դարերի
պատմութիւնը չուշանայ:

Գ. Վ. Յովսէփեան

Սահակ ա. քահանայ Սահակեանց.— ՀԻՆ ՈՒԽՏ, ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏ-
ՄՈՒԹԻՒՆ պատկերազարդ. Ը. տպագրութիւն, Թիֆլիս, 1908. գինն է
50 կոպէկ:

Հին ուխտի պատմութիւնը է դուր չէ ըսողը քրիստոնեայ
ազգերի դպրոցներում կրթութեան հիմք դարձել: Թէև այդ

պատմութիւնը ազգային-հրէական գոյն ունի և, ինչպէս ամենայն զրահանութիւն ու պատմութիւն, ուստի պահել է հրէական ժողովրդական կեանքի պահպանութեան կողմերի նկարագրութիւններ, բայց և այնպէս ոչ մի ազգի պատմութիւն չի կարող այնպէս գեղեցիկ կերպով պատկերացնել բարւոյ և չարի գնահատութեան և Աստուծոյ ղեկավարութեան գաղափարները, ինչպէս հրէից պատմութիւնը: Աւել, գեղեցիկը, ճշմարիտն ու առաքինին կարմիր թելի նման անցնում է ամբողջ պատմութեան միջով ի դէմս նահապեաների, առաջնորդների և մարգարէների: Մանկավարժութեան գործն է այդ գեղեցիկ նիւթը յարմարեցնել մանուկների դաստիարակչական նպատակների համար, զանց անելով գայթակղեցուցիչ և կրթական նպատակների համար անպէտք մասերը:

Սահակ ա. քահանայի Հին ու լստի որբազան պատմութիւնը այս տեսակէտով լիովին բաւարարութիւն կարող է աւել: Երբեմանկավարժ և երկար տարիների փորձագետ ուսուցիչ կարողացել է ընտրել և պարզ նկարագրել այնպիսի նիւթեր, որոնք բարոյական դաստիարակութեան համար արժէք ունին: Դայթակղեցուցիչ հատուածներ կամ քրիստոնէական բարոյականութեան անյարիր հայեացքները դուրս են ձգուած կամ բոլորովին մեղմացրած: Նա կարողացել է ճարպիկ կերպով թռչել այնպիսի պատմութիւնների վրայով, որ չյիշուել չէին կարող իբրև կապ (Պետափրէսի կնոջ և Յովսէփի պատմութիւնը): Դուրս է ձգել և այնպիսի առասպելական հրաշալի պատմութիւններ, որոնք ներկայ հասկացողութեան հակառակ մանուկների համար միայն կասկածի և անվստահութեան աղբիւր կարող էր լինել դէպի կրօնը և կրօնությունից անձնաւորութիւնը (արևի կանգնելը Յեսուի ժամանակ): Գրքի այս առաւելութիւնները միացած պարզ և հակիրճ նկարագրութեան հետ նորատարածման պատճառը պիտի համարել:

Բայց նորագոյն՝ Լ. ապագրութիւնը ուրիշ, նոր առաւելութիւն է բերում. այդ բովանդակութեան համապատասխան պատկերներն են: Մենք արդէն մի անգամ նոյն հեղինակի Կրօնի ա. տարուայ դաստեարի ժա. հրատարակութեան առթիւ (Արարատ. 1907. գեղտ) ակնարկել ենք պատկերների նշանակութիւնը դասագրքի համար: Պատկերներն ինքնբոսինքեան երեսխանների համար հետաքրքրական են. նոքա նպատում են նաև համապատասխան պատմութիւնները հեշտութեամբ իւրացնելու և յիշողութեան մէջ դրոշմելու համար: Պատկերների շնորհիւ դասերը աւելի թանձրացեալ կերպարանք են ստանում և

մատչելի դառնում. լսողութեան գործարանին սգնութեան է հասնում և տեսողութիւնը: Սորա վերան պիտի աւելացնել և գեղասիրական արժէքը, մանաւանդ, որ Սահակ ա. քահանայի ընտրած պատկերները բոլորը դասական նկարիչների և արձանագործների երկեր են: Անշուշտ աւելի լաւ կլինէր, եթէ պատկերները մեծ լինէին և դունաւոր այն էլ տաւանձին և ոչ դասադրելի մէջ, ինչպէս նկատել է հեղինակը իւր յառաջաբանում, բայց այդ էլ կապուած կլինէր մեծ ծախսերի հետ, որով և անմատչելի աղքատ աշակերտները և դիւղահան դըպրոցների համար:

Տարաբաղդաբար դասագրքի մէջ սպրդել են աեղ տեղ ապագորութեան սխալներ որ յատկապէս դասագրքի մէջ ցանկալի չէ:

Գ.

Բժիշկ Սիմէօն Շահ-Նազարեանց «Սեդրակ Մանգի-նեանը՝ իբր՝ սեռույ Երեւանի հայոց թեմական հոգեւոր դպրանոցի» (1892 թ. սեպտեմբեր-ց 1895 թ. յունուար), տպարան Ե. Աւետիքեանի, Մոսկվա, 1907, 100 էրես, գինը՝ 50 կոպ.:

I

Սիրուն միտք է յղացել ըԺ. Ս. Շահ-Նազարեանցը, — տալ մեր դպրոցական ասպարէզում գործած անձնաւորութիւնների պատկերը, արտանկարելով այն ձեռի տակ ունեցած պաշտօնական նիւթերից:

Այս անգամ նա տալիս է՝ մեր դպրոցական պատմութեան մէջ յայտնի՝ մանկավարժ Սեդրակ Մանգինեանի տեսչական պատկերը:

Բայց այդ հանգամանքն աւելի է կշիռ ոտանում, երբ յիշում էք, որ ինքը հեղինակն ևս եղած է այն դպրոցի երեւման տեսուչը, որտեղ, իրանից յետոյ, գործել է Ս. Մանգինեանը: Ու, այս դէպքում ոչ միայն մասնապէս դպրոցում, այլ և հանրապէս կեանքի մէջ՝ տեղի է ունենում մի երևոյթ, հազուադիւտ երևոյթ, որ պատիւ է բերում նրա նախապատճառին. — դպրոցի նախկին պաշտօնեան հրապարակ է հանում յետնորդի պատկերը, այն էլ ինչպէս շուտով կտեսնուի, դրական կողմով:

Դիւրքը բաղկացած է երեք մասից. «Յառաջաբանի փոխաբէն», որ բռնում է 7 էրես, «Յաւելուած»՝ 26 և իսկական նիւ-